DOI: 10.59560/18291155-2025.1-124

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ Սահմանադրական դատարանի
նախագահի օգնական,
Հայ-ռուսական համալսարանի դասախոս

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՐԱՆՑՈՒՄ ՀԱՄԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում «սահմանադրական կարգի» ու «սահմանադրական կարգի հիմունքների» տարանջատման հիմքով վերլուծվել են «սահմանադրական կարգի» հասկացության բնորոշումները և վեր են հանվել դրանցում առկա բացթողումներն ու թերությունները, առաջադրվել են սահմանադրական կարգին բնորոշ որոշակի հատկանիշներ և այդ հիմքով փորձ է արվել կառուցել սահմանադրական կարգի հեղինակային բնորոշումը:

Հիմնաբառեր. սահմանադրություն, սահմանադրական կարգ, սահմանադրական կարգի հիմունքներ, համընդհանրություն, առանձնահատկություն, եզակիություն, հատկանիշ, հասկացություն:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ օգտագործում են «սահմանադրական կարգ» և «սահմանադրական կարգի հիմունքներ» հասկացությունները և ամենատարածված մոտեցման համաձայն՝ «սահմանադրական կարգը պետության և քաղաքացիական հասարակության սահմանադրությամբ ամրագրված կառույցն է», «իսկ սահմանադրական կարգի հիմունքները հասարակության և պետության կառույցի էությունը կազմող գլխավոր արմատական հասարակական հարաբերություններն են և դրանցից արտաբերված համապատասխան սկզբունքները»[1]: Օրինակ, Օ.Գ. Ռումյանցևի կարծիքով՝ «պետական և հասարակական կարգի օբյեկտիվ հիմքեր ունեցող սահմա-

[1] Տե՛ս **Безуглов А.А., Солдатов С.А.** Конституционное право России. В трех томах. Том 1. - М., 2001, էջեր 213-214, 351-352:

նադրական սկզբնահիմքերն իրենց արտահայտությունն են գտնում սահմանադրական կարգի հիմունքներում»[1]:

Հիմք ընդունելով հասկացութային այս տարանջատումը՝ փորձենք վերլուծել տվյալ հասկացությունները: Բնորոշումներից մեկի համաձայն՝ «սահմանադրական կարգը պետության սահմանադրությամբ ամրագրված որոշակի ձևը, կազմակերպման որոշակի եղանակն է»[2]: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ «սահմանադրական կարգն այն կարգն է, որի պայմաններում պահպանվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ պետությունը գործում է սահմանադրությանը համապատասխան»[3]:

Վերոբերյալ բնորոշումները չեն կարող համարվել լիարժեք և ընդունելի, որովհետև դրանցում սահմանադրական կարգը վերագրվում է միայն պետության կառույցին, իսկ երկրորդում միաժամանակ շեշտադրվում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանումը: Սակայն սահմանադրական կարգը վերաբերում է ոչ միայն պետությանը, ինչպես նաև մարդուն, այլև հասարակական ողջ համակարգին, հետևաբար նաև դրա առանցքային ենթահամակարգերին (տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային և այլն): Այս դիտողությանը համապատասխան գրականության մեջ առկա են սահմանադրական կարգի այնպիսի բնորոշումներ, որոնք ավելի լայն են իրենց տրամաբանական ընդգրկման աստիճանով: Դիտարկենք դրանցից մի քանիսը: Օ.Գ. Ռումյանցևը սահմանադրական կարգը սահմանում է որպես «սոցիալ-իրավական հարաբերությունների և ինստիտուտների ամբողջական համակարգ, որը ենթարկված է բարոյական և սահմանադրական անվերապահ թելադրանքներին (պահանջներին): Դրանք հիմնված են հիմնարար կարգադրագրիչների համակցության վրա, որոնք նպաստում են հասարակական պրակտիկայում և իրավագիտակցության մեջ՝ **մարդու, քաղաքացիական հասարակության ու պետության** միջև կայուն, արդար, մարդասիրական ու իրավական կապերի ամրագրմանը»[4]:

Վ.Տ. Կաբիշևը սահմանադրական կարգը դիտարկում է որպես սահմանադրական հարաբերությունների համակարգ, որպես սահմանադրական-իրավական կարգավորման, ինչպես նաև սահմանադրական նորմերի ու սկզբունքների արդյունք, որոնք կարգավորում ու ամրագրում են իրականում գոյություն ունեցող կարգի հասարակական հարաբերությունների առանձին տեսակները[5]:

---

[1] Տե՛ս **Румянцев О.Г.** Основы конституционного строя России. - М., 1994, էջ 22:

[2] Տե՛ս **Козлова Е.И., Кутафин О.Е.** Конституционное право России. - М., 1999, էջ 76:

[3] Տե՛ս **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации. - М., 1999, էջ 98:

[4] Տե՛ս **Румянцев О.Г.** Основы конституционного строя России. - М., 1994, էջ 23-24:

[5] Տե՛ս **Кабышев В.Т.** Становление конституционного строя России // Конституционное развитие России: межвузовский научный сборник. - Саратов, 1993, էջ 4:

Վերը բերված բնորոշումների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ դրանց բնորոշ են որոշակի թերություններ ու բացթողումներ այնքանով, որքանով դրանց մի մասին, ինչպես նշվեց վերևում, **առաջին՝** բնութագրական է նեղ ընդգրկման աստիճանը, քանի որ սահմանադրական կարգերը վերագրվում են միայն անհատին և պետությանը, հազվադեպ միայն պետությանը, այնինչ դրանց ընդգրկման առարկայական ոլորտում անհրաժեշտորեն պետք է ներառվի նաև բուն հասարակությունը՝ իր քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային հարաբերություններով:

Սահմանադրական կարգի վերը բերված բնորոշումների **երկրորդ** թերությունն այն է, որ դրանցում անտեսված է սահմանադրական կարգերի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է դրանց սոցիալական նշանակությունը (կամ առաքելությունը): Մասնավորապես՝ վերը բերված բնորոշումներից ոչ մեկը չէր պարունակում նման բնույթի որևէ հատկանիշ: Այդուհանդերձ գրականության մեջ կան սահմանադրական կարգի որոշ բնորոշումներ, որոնք ներառում են սահմանադրական կարգի սոցիալական նշանակությանը վերաբերող հատկանիշ, սակայն մասնակիորեն: Այսպես օրինակ՝ Յու.Պ. Երեմենկոն սահմանադրական կարգը բնորոշում է որպես հասարակության մեջ գերիշխող տնտեսական, քաղաքական և գաղափարական հարաբերությունների սահմանադրական ձևով արտահայտված համակարգ, որոնք կեսագործում են ժողովրդի լիիշխանությունը (ինքնիշխանությունը) և որոշում են ամբողջ հասարակության էությունը և հիմնական գծերը[1]: Ըստ Յու.Պ. Երեմենկոյի՝ ստացվում է, որ սահմանադրական կարգի գլխավոր առաքելությունը ժողովրդաիշխանության կենսագործումն է: Համաձայնվելով այս պնդման հետ՝ այդուհանդերձ, պետք է նկատել, որ նման մոտեցումը պարունակում է որոշակի բացթողում, այն իմաստով, որ ընդգծում է, իհարկե, կարևոր, բայց միայն մեկ նպատակ-առաքելություն, այնինչ սահմանադրական կարգի հասարակական նշանակությանը պետք է մոտենալ (վերաիմաստավորել) բավականին լայն տեսանկյունից՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դրանք բացի ժողովրդավարությունից կարող են ունենալ այլ, ընդ որում էական կարևորության նպատակ-առաքելություններ, որոնք իրենց բնույթով կարող են պայմանավորված լինել կոնկրետ հասարակության ու նրա պետության առջև ծառացած կարևորագույն, առանձնակի խնդիրներով:

Այս տեսանկյունից սահմանադրական կարգի կարևոր հատկանիշ պետք է համարել այն, որ դրանք կոչված են կենսագործելու ինչպես ժողովրդաիշխանությունը, այնպես էլ տվյալ հասարակության առջև կանգնած առաջնային խնդիրները, որոնք կարող են լինել տարաբնույթ, վերաբերել

[1] Տե՛ս **Еременко Ю.П.** Советская Конституция и законность / Науч. ред. Ржевский В.А. - Саратов, 1982, էջ 18:

հասարակության բոլոր ենթահամակարգերին կամ կարևոր ինչ-որ մասնակի խնդրի:

Սահմանադրական կարգի վերը բերված բնորոշումների **երրորդ** բացթողումը, մեր կարծիքով, համարվում է դրանց կտրվածությունը այն հասարակությունից, որին դրանք վերաբերում են: Միանշանակ ընդունելի է այն, որ սահմանադրական կարգերում և դրանք արտահայտող հիմունքներում (սկզբունքներում) առկա են համընդհանուր միտումներ և բովանդակություն, սակայն, համաշխարհային սահմանադրական զարգացման միտումները վկայում են, որ սահմանադրական կարգերն ու դրանց հիմունքները, ունենալով համընդհանրություն, միևնույն ժամանակ աչքի են ընկնում նաև յուրահատուկ, ինչպես նաև եզակի հատկանիշներով[1]: Ձևավորման պատմական ճակատագիրը որոշ պետությունների բերել է սահմանադրական կարգավորման, ներառյալ սահմանադրական կարգի հիմունքների ատիպիկ, ընդհանուր կարգից շեղվող իրավակարգավորումների: Օրինակ՝ Ճապոնիայի 1947 թ. Սահմանադրության 9-րդ հոդվածն ամրագրում է «**պացիֆիզմի» սկզբունքը.** «ժողովուրդը հայտարարում է, որ հավերժ հրաժարվում է պատերազմից՝ որպես ազգի ինքնիշխան իրավունքից, ինչպես նաև դրա սպառնալիքից կամ զինված ուժերի կիրառումից՝ որպես միջազգային վեճերի լուծման միջոցից»: Դրանից ելնելով՝ Սահմանադրությունը սահմանում է, որ «երբեք չեն ստեղծվի ցամաքային, ծովային և ռազմաօդային ուժեր, հավասարապես նաև պատերազմի այլ միջոցներ: Պատերազմ վարելու պետության իրավունքը չի ճանաչվում»: Այն չի սահմանում զինվորական ծառայության պարտականության վերաբերյալ դրույթներ[2]:

Այս փաստը գալիս է հաստատելու, որ սահմանադրական կարգն իր էությամբ և բովանդակությամբ բացի համընդհանուրից պայմանավորված է

---

[1] Սահմանադրական իրավունքի գիտության մեջ ընդունված է սահմանադրական սկզբունքների, ըստ իրենց բնույթի, բաժանումը երեք հիմնական խմբերի՝ **համընդհանուր, առանձնահատուկ, եզակի**: Համընդհանուր են համարվում համամարդկային արժեք ունեցող, համաշխարհային քաղաքակրթության կողմից մշակված և արդի սահմանադրությունների մեծ մասին բնութագրական սկզբունքները: Առանձնահատուկ սկզբունքներ են կոչվում մի խումբ պետությունների սահմանադրություններում ամրագրված կամ սահմանադրական որոշակի մոդելին բնորոշ սկզբունքները, օրինակ՝ սոցիալիստական սահմանադրությունների սկզբունքները կամ ազգայնականության սկզբունքը (Բանգլադեշ, Ինդոնեզիա), աֆրիկյան միասնության սկզբունքը: Եզակի սկզբունքներն ամրագրված են միայն առանձին վերցրած երկրի սահմանադրությամբ և արտացոլում են դրա ազգային առանձնահատկությունը: Օրինակ՝ Պակիստանի Սահմանադրությամբ ամրագրված է «իսլամական կենսակերպի» սկզբունքը, իսկ Ճապոնիայում՝ պատերազմից հրաժարվելու (պացիֆիզմ) սկզբունքը (տե՛ս **Енгибарян Р.В.** Конституционное развитие в современном мире: основные тенденции / Р.В. Енгибарян. 2-е изд. - М.: НОРМА, 2010, էջ 154-157:

[2] Այդ մասին մանրամասն տե՛ս **Маклаков В.В.** Вступительная статья к Конституции Японии // Конституция зарубежных государств; сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М., 2006, էջեր 381-394:

նաև կոնկրետ հասարակության էական առանձնահատկություններով: Այդ հասարակության առանձնահատկությունները, ձեռք բերելով առանձնակի կարևորություն, որոշակի իրավիճակներում ներառվում են սահմանադրական կարգի շրջանակում և արտացոլվում դրա հիմունքներում: Այս հանգամանքը շատ կարևոր է, որովհետև սահմանադրական կարգի արհեստական ընդօրինակումը (ռեցեպցիան), առանց տվյալ հասարակության տարաբնույթ, պատմական տվյալ պահին կարևոր նշանակություն ունեցող որոշակի առանձնահատկությունների հաշվառման, կարող է առաջացնել էական խզվածք սահմանադրական իրավակարգավորումների (նորմերի) և իրականության միջև, ինչը հղի է բազմաթիվ վտանգներով:

Ամփոփելով արված վերլուծությունը՝ սահմանադրական կարգը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. **սահմանադրական կարգը համընդհանուր օրինաչափություններով, ինչպես նաև կոնկրետ հասարակության առանձնակի ու եզակի հատկություններով պայմանավորված՝ անհատի իրավական կարգավիճակի, հասարակության և պետության սահմանադրությամբ հիմնադրված այնպիսի կառույցն է, որը նպատակաուղղված է ժողովրդաիշխանության, ինչպես նաև հասարակության առաջնային նշանակության խնդիրների կենսագործմանը:**

Սահմանադրական կարգի այս բնորոշումը տեղայնացնելով կամ համեմատելով Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքների հետ՝ ակնհայտ են դառնում հետևյալ եզրահանգումները:

Առաջին՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքները՝ որպես նրա սահմանադրական կարգի իրավաբանական արտացոլում, իրեն վերաբերող կարգավորման օբյեկտի տեսանկյունից ընդգրկուն և լայն են այն իմաստով, որ կարգավորման ոլորտ են ներառել ինչպես անհատի կարգավիճակին, այնպես էլ պետության ու հասարակության կառույցին վերաբերող հիմնադրույթներ, որոնք հիմնականում համընկնում են կամ համահունչ են հիմնահարցի համաշխարհային համընդհանուր օրինաչափություններին ու միտումներին, սակայն դրանցում բացակայում են Արցախի որպես հասարակական-պետական ընդհանրության առանձնահատկություններն արտացոլող ինչ-որ հիմունքներ (սկզբունքներ), որոնք պայմանավորված են հենց նրա ակնհայտորեն առկա պատմաքաղաքական, աշխարհաքաղաքական կացության ու կարգավիճակի յուրահատկություններով, հետևաբար պետք է վերհանվեին և հաշվի առնվեին սահմանադրման գործընթացում և ստանային պատշաճ սահմանադրական ամրագրում:

Երկրորդ՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց ողջ նպատակային նշանակությունը հանգում է

ժողովրդաիշխանության համընդհանուր կոնցեպտի (ներառյալ անհատին, հասարակությանը, պետությանը վերաբերող) կենսագործմանը: Սակայն դրանցում բացակայում են Արցախի Հանրապետության ներքին ու արտաքին առանձնահատկություններով պայմանավորված և նրա առջև կանգնած առաջնային նշանակության կոնկրետ խնդիրների կենսագործմանն ուղղված կառուցակարգային հիմունքներն ու սկզբունքները, որոնք պայմանավորված են ոչ թե սահմանադրական կարգի համընդհանուր համատեքստով, այլ առաջին հերթին բխում են Արցախի հասարակության յուրահատուկ ներքին և արտաքին կացությունից, որպես նրա առջև կանգնած առաջնային նշանակություն ունեցող խնդիրներ ու գործառույթներ: Որպես օրինակ կարող ենք նշել Արցախի Հանրապետության արտաքին քաղաքական կացությունը և նրա աշխարհաքաղաքական վիճակը: Հանրապետության չճանաչված լինելու հանգամանքը և նրա շուրջ առկա աշխարհաքաղաքական իրավիճակը պայմանավորում էին մշտական ռազմական ներխուժման վտանգը, որը, ի տարբերություն ճանաչված պետության, չուներ դրա չեզոքացման արտաքին քաղաքական, դիվանագիտական համապատասխան լծակներն ու կառուցակարգերը: Հետևաբար պաշտպանության կազմակերպման հարաբերությունների կարգավորումները Արցախի Հանրապետությունում պետք է արժանանային առանձնահատուկ ուշադրության, վերածվեին յուրահատուկ բնույթի սահմանադրական կարգի հիմունքների՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Պետք է համաձայնվել նաև այն հեղինակների հետ, ովքեր Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության աշխարհաքաղաքական առանձնահատկություններից ելնելով՝ հիմնավորում են, որ պետական կառուցակարգի կազմակերպական ու գործառութային սկզբունքներից է պաշտպանունակության սկզբունքը, և որպեսզի այդ սկզբունքից բխող իրավական պահանջների իրավական գործողությունը տարածվի և՛ հանրային իշխանության կառույցի, և՛ հասարակության (ժողովրդի), և՛ քաղաքացիների վրա, սկզբունքը պետք է ունենա «սահմանադրական կարգի հիմունքի» իրավական ուժ[1]:

[1] Ա. Վաղարշյանն այդ սկզբունքը մեկնաբանում է որպես ելակետային դրույթ, որի կենսագործումը կապահովի պետական համակարգի ինքնապահպանումը, ինքնավերարտադրումը, ինքնակատարելագործումը՝ արտակարգ, ռազմական իրավիճակներում (տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-1: (Դասախոսություններ), ԵՊՀ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 203-206): **Վաղարշյան Ա.Գ.** «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 2 (88). 2016, էջ 45-53; Այս սկզբունքի բովանդակային տարրերը զարգացրել է նաև Լ. Բարսեղյանը (տե՛ս **Վաղարշյան Ա.Գ., Բարսեղյան Լ.Վ.,** «Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. Նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 1-2(95-96). 2018, էջ 232-245):

ԱՄՓՈՓՈՒՄ

Սահմանադրական կարգը, դրա սահմանադրական հիմունքների շրջանակն ու բովանդակությունն իրենց էությամբ, ինչպես նաև սոցիալական նշանակությամբ, բացի համընդհանուրից, պայմանավորված են նաև կոնկրետ հասարակության առանձնացող, երբեմն նաև եզակի հատկություններով: Հետևաբար **սահմանադրական կարգը համընդհանուր օրինաչափություններով, ինչպես նաև կոնկրետ հասարակության առանձնակի ու եզակի հատկություններով պայմանավորված՝ անհատի իրավական կարգավիճակի, հասարակության և պետության սահմանադրությամբ հիմնադրված այնպիսի կառույցն է, որը նպատակաուղղված է ժողովրդաիշխանության, ինչպես նաև հասարակության առաջնային նշանակության խնդիրների կենսագործմանը:**

Մեթոդաբանական հիմք ընդունելով այս բնորոշումը՝ ակնհայտ է, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքները, կարգավորման օբյեկտի տեսանկյունից լինելով ընդգրկուն և լայն, համահունչ հիմնահարցի համաշխարհային համընդհանուր օրինաչափություններին ու միտումներին, բաց են ու որոշակի առումով թերի՝ Արցախի որպես հասարակական-պետական ընդհանրության պատմաքաղաքական, աշխարհաքաղաքական կացության ու կարգավիճակի առանձնահատկություններն արտացոլելու, ինչպես նաև սահմանադրական կարգի սոցիալական նպատակային նշանակությունը համակարգային ու ամբողջական կերպով կարգավորելու տեսանկյուններից:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Безуглов А.А., Солдатов С.А.** Конституционное право России. В трех томах. Том 1. - М., 2001.
2. **Румянцев О.Г.** Основы конституционного строя России. - М., 1994.
3. **Козлова Е.И., Кутафин О.Е.** Конституционное право России. - М., 1999.
4. **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации. - М., 1999.
6. **Кабышев В.Т.** Становление конституционного строя России // Конституционное развитие России: межвузовский научный сборник. - Саратов, 1993.
7. **Еременко Ю.П.** Советская Конституция и законность / Науч. ред. Ржевский В.А. - Саратов, 1982.

8. **Енгибарян Р.В.** Конституционное развитие в современном мире: основные тенденции / Р.В. Енгибарян. 2-е изд. - М.: НОРМА, 2010.

9. **Маклаков В.В.** Вступительная статья к Конституции Японии // Конституция зарубежных государств. Сост. сб., пер., авт. введ. и вступ. ст. В.В. Маклаков. – 5-ое изд., перераб. и доп. – М., 2006.

10. **Վաղարշյան Ա.Գ.,** Պետության և իրավունքի տեսություն-1: (Դասախոսություններ), ԵՊՀ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 203-206):

11. **Վաղարշյան Ա.Գ.,** «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 2 (88). 2016, էջ 45-53:

12. **Վաղարշյան Ա.Գ., Բարսեղյան Լ.Վ.,** «Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. Նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 1-2(95-96). 2018, էջ 232-245):

ПРОБЛЕМЫ ПОНЯТИЯ КОНСТИТУЦИОННОГО СТРОЯ В КОНТЕКСТЕ ОТРАЖЕНИЯ В НИХ УНИВЕРСАЛЬНОСТИ И КОНКРЕТНОСТИ

Аннотация

В статье на основе разграничения понятий конституционного строя и основ конституционного строя раскрыты признаки понятия “конституционный строй”, выявлены имеющиеся в них упущения и недостатки, даны определенные характеристики, присущие конституционному строю, и на этой основе предпринята попытка дать авторское определение конституционного строя.

Ключевые слова: конституция, конституционный порядок, основы конституционного строя, универсальность, особенность, уникальность, признак, понятие.

THE PROBLEMS OF THE CONCEPT OF CONSTITUTIONAL ORDER IN THE CONTEXT OF REFLECTION OF UNIVERSALITY AND CONCRETENESS THEREIN

Annotation

Based on the separation of the “constitutional order” and the “foundations of constitutional order”, the definitions of the “constitutional order” were analyzed in the article, the omissions and shortcomings therein were identified, and certain characteristics inherent in the constitutional order were put forward, and on this basis, an attempt was made to build the author's definition of the constitutional order.

Keywords: constitution, constitutional order, foundations of constitutional order, universality, peculiarity, uniqueness, characteristic, concept.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 03.03.2025 թ., տրվել է գրախոսության 12.03.2025 թ., ընդունվել է տպագրության 21.03.2025 թ.: